ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 փետրվարի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

17
(3048)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

783 ՀԱԶԱՐԻՑ 5000-Ն ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ԼՐԱՑՐԵԼ



2024 թվականից մեկնարկել է ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի երկրորդ փուլը, որի շրջանակում 2024 թվականի հաշվետու տարվա համար հայտարարագրերը ներկայացվում են մինչեւ 2025 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ: Այս համակարգի շրջանակում հայտարարագիր է լրացրել 5 հազար 766 ֆիզիկական անձ, այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան հայտնել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեից:

Հարցին, թե քանի անձ է մինչեւ այժմ ներկայացրել համընդհանուր հայտարարագիր, ՀՀ ՊԵԿ-ից պատասխանել են. «ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տեղեկություններով՝ 10.02.2025 թվականի դրությամբ 2023 թվականի հաշվետու տարվա համար 59 հազար 052 ֆիզիկական անձ, իսկ 2024 թվականի հաշվետու տարվա համար 5 հազար 766 ֆիզիկական անձ ներկայացրել է եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկ՝հայտարարագիր: Հարկ է նշել, որ այս ցուցանիշները դինամիկ աճող են»,- ասված էր ՊԵԿ-ի պատասխանում: Նկատենք, որ ներդրված համընդհանուր հայտարարագրումն այնքան մեծ աղմուկ բարձրացրեց քաղաքացիների շրջանում, որ ոչ միայն քաղաքացիական ճնշման արդյունքում, այլ նաեւ համակարգում առկա հերթերի եւ համակարգի բացերի պատճառով իշխանությունները հայտարարագրման վերջնաժամկետը երկարեցրին մայիսի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը:

Հարցին, թե որն է եղել հայտարարագրեր ներկայացնելու ժամկետների երկարաձգման պատճառը, ՊԵԿ-ը պարզաբանել է, որ հայտարարագրերի ներկայացման ժամկետի երկարաձգման հարցը նույնականացման քարտ չունեցող քաղաքացիներին բավարար ժամանակ տրամադրելու համար է արվել: Այնինչ ահազանգերը, որ անձնագրայիններում անգամ ասեղ գցելու տեղ չկա, չեն դադարում: Սա այն դեպքում, երբ ներդրվել են միլիոններ՝ անձնագրայիններում հերթագրման համակարգեր ներդնելու համար, բայց խնդիրը, միեւնույնն է, չի կարգավորվում: Նշենք նաեւ, որ այժմ հերթագրման ամենամոտ ժամկետը հունիս ամսին է: Հարկ է նշել, որ տարեվերջին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ 2024 թվականի նոյեմբերի դրությամբ Հայաստանում գրանցվել է 782 հազար 832 աշխատատեղ: Ստացվում է՝ մոտ 783 հազար քաղաքացի պետք է հայտարարագիր ներկայացնի, սակայն 1.5 ամսում անգամ 5 տոկոսը հայտարարագիր չի ներկայացրել: Ասել է թե՝ ՀՀ քաղաքացիները բոյկոտում են հայտարարագրի որոշման դեմ:

Այսօր լրացավ 1 ամիսը ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանի մահվան դեպքից, սակայն դեռ պարզ չէ, թե ինչ կատարվեց Միեր Սահակյանի հետ, ինչ հանգամանքներում նրա մեքենան հայտնվեց ձորի խորքում, ինչպես մահացավ: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել է ՀՀ քննչական կոմիտե, որտեղից ի պատասխան հայտնեցին, որ նշանակված փորձաքննությունների մասով եզրակացությունները դեռ չեն ստացել: Սա նշանակում է, որ 1 ամիս անց դեռ առեղծված է մնում պատգամավորի մահը: Ինչպես ավելի վաղ հայտնի էր դարձել, ՆԳՆ ՓԾ 911 ծառայություն ահազանգ էր ստացվել, որ Երեւան-Երասխ-Մեղրի ավտոճանապարհի Տիգրանաշենի ոլորանների հատվածում ավտոմեքենա է ընկել ձորը, մոտ 350-400 մետր գլորվել է խորքում: Ավտոմեքենայի մեջ փրկարարները հայտնաբերել էին Ազգային ժողովի պատգամավոր, «Հայաստան» խմբակցության անդամ Միեր Սահակյանի մարմինը, ում նախորդ օրվանից որոնում էին: Պատգամավորի գործընկերները ArmLur.am-ի հետ զրույցում պատմել էին, որ Սահակյանը օդանավակայան էր գնացել, դիմավորել էր արտերկրից վերադարձած ծնողներին, տարել տուն, ապա դուրս եկել՝ասելով, թե գործեր ունի: Դեպքից 1ամիս անց կարեւոր հարցերը մնում են անպատասխան: Ո՞ւր է գնացել Միեր Սահակյանը: Ո՞ւմ հետ է եղել: Ինչո՞ւ է հասել Տիգրանաշենի ոլորաններ: Հարազատները նշում են՝ այդ տարածքներում ծանոթ-բարեկամ չունեն: Ո՞ւմ հետ էր խոսել վերջին անգամ, ի՞նչ էր ասել: Կարո՞ղ էր ինչ-որ մեկը նրան այնտեղ հասցնել՝ վնասելու նպատակով: Հնարավո՞ր է՝ որեւէ ՔՊ-ական կամ ՔՊ-ամերձ քինախնդրություն դրսեւորի, վրեժխնդիր լինի նրանից, որ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ՝ 2023 թվականի մարտի 31-ին, հարվածեց ՔՊ պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին: Ինչո՞ւ կա այս հարցը, որովհետեւ ՔՊ-ականները դաժան վրեժխնդիր եղան երիտասարդ Սամվել Վարդանյանից:

«Ժողովուրդ» օրաթերթը փետրվարի 5-ի համարում գրել էր, որ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը ինքն իրեն 12 հոգու հետ գործուղել է Լյուքսեմբուրգ, ապա Բելգիա, եւ իր հետ տարել է ընդամենը 2 պատգամավորի. պատվիրակության մյուս անդամները Ազգային ժողովի նախագահի գրասենյակի ներկայացուցիչներն էին: Այս հրապարակման մեջ Ազգային ժողովի նախագահի թիմակիցներին խոցել էր հատկապես «Արդուկի գծով խորհրդական Աշխեն Հայրապետյան» ձեւակերպումը, որի առնչությամբ ստիպված եղանք առանձին հարցում ուղարկել:

Շարունակությունը՝ 3-րդ էջում ⇨ 3

Շիրակի մարզում միս արտադրողները եւ մսագործները փետրվարի 3-ին բողոքի ակցիա էին իրականացնում՝ դժգոհելով, որ Շիրակում սպանդանոց չկա, փոխարենը կա սպանդանոցում մորթ իրականացնելու Կառավարության հստակ որոշումը: Եթե շուկայում հայտնաբերվի ոչ սպանդանոցային ծագման միս, կա՛մ կտուգանեն, կա՛մ միսը կառգրավեն: Շիրակցիները պետք է Արմավիրի մարզ հասնեն՝ մսամորթի համար: Երբ սպանդանոցային մորթի մասին էր խոսվում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը չէր էլ մտածել, որ այդ օրենքը շրջանցող առաջին անձը հենց ինքն է լինելու: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանը դեկտեմբերի 29-ին «Ինստագրամում» տեսանյութ էր հրապարակել՝ «չխախտելով իջեւանական ավանդույթները»: «Ժողովուրդ» օրաթերթը Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին հարցում էր ուղարկել՝ պարզելու՝ արդյոք Նիկոլ Փաշինյանի խանձած խոզը սպանդանոցում էր մորթվել, թե ոչ: ՍԱՏՄ-ից ստացանք կառավարական ընտանիքին արդարացնող պատասխան: «Համաձայն «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի՝ ոչ սպանդանոցային պայմաններում կենդանիների մորթը թույլատրվում է անձնական սպառման համար (այդ թվում՝ կրոնական եւ այլ ընդունված ծիսակատարությունների դեպքում»,- ասված է «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան: Ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանի խանձած խոզը չի մորթվել սպանդանոցում: Այսինքն՝ Փաշինյանը օրենք է ընդունում ուրիշների այլ ոչ իր կամ իր ընտանիքի համար:

ՄԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՆԻՊՈՒԼԱՑՆՈՒՄ Է

ԲՈՅԿՈՏԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ՄԵԾ ՉԵՆ. ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«Ժողովուրդ» օրաթերթը հանրային տրանսպորտի թանկացման վերաբերյալ զրուցել է ՔՊ-ական պատգամավոր Լիլիթ Մինասյանի հետ:

-Տիկին Մինասյան, այս օրերին քննարկվում է տրանսպորտի թանկացման հարցը. ընդդիմությունն ասում է, որ պետք է 100 դրամի սակագինը պահել, իսկ իշխանությունը պնդում է, որ պետք է դառնա 150 դրամ: Ձեր դիրքորոշումը ո՞րն է, ի՞նչ պետք է անել, որպեսզի հանրությունը չբոյկոտի, քանի որ տեւական ժամանակ է՝ քաղաքացիների մի մասը բոյկոտում ու չի վճարում:

-Ես կարծում եմ, որ բոյկոտի ծավալներն այդքան էլ մեծ չեն: Բնականաբար սոցիալական դժգոհություն է առաջանում, բայց քաղաքացիների մեծ մասը հասկանում է՝ քանի որ մենք տրանսպորտի շարժակազմի մեծ փոփոխություն ենք արել, եւ հետագայում էլ ավելացնելու ենք շարժակազմը, որպեսզի ավելի արագ եւ քիչ ծանրաբեռնված երթեւեկություն ապահովենք, լինեն կահավորված կանգառներ, ժամատախտակ, ապա այդ փոփոխությունների համար անհրաժեշտ է, որ լինի որոշակի գնային փոփոխություն:

-Դուք օգտվո՞ւմ եք տրանսպորտից:

-Այս ընթացքում փորձել եմ օգտվել: Պիկ ժամերին բավականին բարդություններ կան, բայց մնացած ժամերին չեմ կարող համեմատել ներկայիս տրանսպորտը այն տրանսպոտի հետ, որի համար մենք վճարում էինք 100 դրամ եւ պայքարում էինք, որ չդառնա 150 դրամ:

-Նախկին տրանսպորտի ի՞նչն էր վատ: Դուք ի՞նչ փոփոխություն եք նկատում:

-Դուք «Գազելների» եւ ավտոբուսների միջեւ տարբերություն չե՞ք տեսնում: Կամ վարորդների տարբերությունը չե՞ք նկատում: Այն ժամանակ նրանք ծխելով, մարդկանց հետ ոչ բարեկիրթ խոսելով էին երթեւեկում, իսկ հիմա արտահագուստով են: Տրանսպորտներում կան օդափոխության համակարգեր, կան Wi fi սարքեր, կան շատ այլ հարմարություններ: Իհարկե, ծանրաբեռնվածության խնդիր կա, բայց այդ խնդիրը լուծվելու է՝նոր շարժակազմեր բերելով: Արդեն հայտարարվել է, որ քաղաքապետարանը պատրաստվում է 270 ավտոբուս ձեռք բերել: Ինչքան տրանսպորտի բարեփոխման խնդիրներն ավելանում են, այնքան էլ բնակչությունն է աճում, ավտոմեքենաներն են ավելանում, հետեւաբար՝նաեւ խցանումները: Դրա համար պետք են նոր լուծումներ, որի համար քաղաքապետարանը լուծում է տալիս. ավտոբուսների համար հատուկ գծեր են ստեղծվել, որպեսզի ավտոբուսներից օգտվողների համար ավելի հարմարավետ լինի, քան մեքենաներից օգտվողների համար:

-Դուք պնդում եք, որ ձեր իշխանության շնորհիվ է տեղի ունեցել ավտոբուսների բարեփոխման գործընթացը: Իսկ, օրինակ, Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանն էլ պնդում է, որ իր պաշտոնավարման ժամանակ արդեն գնված են եղել այդ ավտոբուսները:

-Հայկ Մարությանի պաշտոնավարման ժամանակ եղել են Zhong Tong ավտոբուսները, իսկ Հայկ Մարությանը, ցավոք սրտի, եղել է մեր քաղաքական թիմի անդամ: Այսինքն՝ նորից մեր իշխանության օրոք է տեղի ունեցել այդ փոփոխությունը, ոչ թե Հայկ Մարությանի անձնական շնորհքն է դա:

-Տիկին Մինասյան, նա նկատի ունի, որ այս իշխանությունների շնորհքը չէ, եւ իր շնորհիվ է եղել, ուղղակի իրականացվել է Տիգրան Ավինյանի գալուց հետո, այսինքն՝ Ավինյանի պաշտոնավարման ժամանակահատվածից սկսել է շահագործվել:

-Ո՛չ, պարոն Մարությանը մանիպուլացնում է. նա ընդամենը մի որոշ շարժակազմ է պատվիրել, որից հետո Man ավտոբուսների մասին միայն պարոն Ավինյանն է խոսել:

-Քաղաքացիները կա՞մ չեն վճարում, կա՞մ 100 դրամ են վճարում, Ձեր կարծիքով՝ այս բոյկոտի վիճակը երկա՞ր կտեւի, թե՞ մտածում եք՝ քիչ-քիչ կմարի պայքարը:

-Ես կարծում եմ, որ այն մարդիկ, որոնք բողոքում են, եթե հաշվարկ անեն իրենց ընտանիքի մասով՝1, 2, 3 տրանսպորտ փոխելու պարագայում ո՛ր փաթեթն է ավելի հարմար իրենց մի կետից մյուս կետը հասնելու համար, գուցե պարզվի՝ավելի հարմար է անսահմանափակ փաթեթներ գնել, օգտվել զեղչային համակարգերից: Այս ամբողջ բարեփոխման իմաստը տոմսային համակարգն է, ոչ թե 150 դրամը:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԹԵԺ Է

ՔՊ-Ի ԵՎ ՀՀԿ-Ի ՀԵՏ ՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ

Գյումրի քաղաքի ավագանու ընտրությունները խոստանում են լինել հետաքրքիր եւ թեժ: Ընտրություններին պայքարելու են Գյումրու նախկին քաղաքաղեր Վարդան Ղուկասյանը, ՔՊ-ի կողմից քաղաքապետի ԺՊ նշանակված Սարիկ Մինասյանը, ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանը: Անդրանիկ Թեւանյանի, Սուրեն Սուրենյանցի ուժերը եւս հայտարարել են մասնակցության մասին: Երեկ էլ հայտնի դարձավ, որ պրոդյուսեր Ռուբեն Մխիթարյանն է որոշել մտնել ընտրապայքարի մեջ՝ հետաքրքիր թիմակիցներով:

ArmLur.am-ի հետ զրույցում նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանը նշում է՝ «Շախմատի «ֆինտերը» էլ չեն անցնում, բոլորի շապիկները պատռվել են, ոչինչ առաջվանը չէ, որ աչքերներս կուրացած լինի»: Հարցին, թե ինչպես է վերաբերվում թեկնածուներին եւ Ռուբեն Մխիթարյանին, որը Գյումրիում մեծ լսարան ունի եւ հայտարարել է, որ մասնակցելու է ընտրություններին, Վարդան Ղուկասյանը արձագանքեց. «Հա, ճանաչում եմ, լավ տղա է, բայց ի՞նքն էլ է առաջադրվելու, ինքն իր գործն ունի, քաղաքապետի պաշտոնը դարձրել են «պլենտուսի» մակարդակի:

Թող 100-200 հոգով մասնակցեն, տեսնենք՝վերջում մի լավ բան կլինի՞, կհաղթի՞ Աստծու ու ժողովրդի կամքը: Եթե այսքան պետության մեջ նախկին ու ներկա, հարստություններով, լրատվամիջոցներով աշխատում են իմ դեմ, գոնե որ հաղթեմ, թող ասեն՝արի ճակատդ պաչեմ»:

Հետաքրքրվեցինք նաեւ՝ եթե որեւէ ուժ չհավաքի 50+ ձայն, ի՞նչ զարգացումներ կլինեն, ինքն արդյոք որեւէ ուժի հետ կոալիցիա կկազմի՞: Վարդան Ղուկասյանը բացառեց. ՔՊ-ի եւ ՀՀԿ-ի հետ որեւէ դեպքում չի համագործակցի: «Եթե քաղաք կառուցողը 50+ ձայն չհավաքի, ո՞վ պետք է հավաքի: Բայց սխալ է ամեն ինչում վստահ լինելը. եթե մարզիկն էլ մրցույթից առաջ ասում է՝ «ես հաղթելու եմ», դա սխալ է, Աստված ում կամեցավ՝նա էլ կլինի:

Ես կոչ կանեի բոլորին, որ քաղաքակիրթ ձեւով գնան պայքարի՝ առանց իրար վրա ցեխ շպրտելու, ժողովուրդը կորոշի՝ ում հավատա: ՀՀԿ-ի ու ՔՊ-ի հետ միանշանակ կոալիցիա չեմ կազմելու, մնացածն էլ՝ կապրենք, կտեսնենք»,- ասաց Վարդան Ղուկասյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Որոշում ունեմ կայացրած: Մասնակցելու եմ Գյումրու քաղաքապետի ընտրություններին, իսկ կոնկրետ ձեւաչափի հետ կապված մոտ օրերս հստակ հայտարարություն կանեմ, թե ինչ ձեւաչափով կմասնակցեմ: Այս մասին, ասել է «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Մարտուն Գրիգորյանը: «Հերթական ընտրություններն են, նորմալ ընտրություններ են լինելու, գյումրեցիները որոշելու են իրենց քաղաքապետին, ես խնդիր չեմ տեսնում:

Բոլորի հետ բանակցություն կա՝բացի իշխանությունից: Ոչ մի քաղաքական ուժ չի կարող ինձ ո՛չ առաջարկել, ո՛չ համոզել, ո՛չ էլ պարտադրել. որոշումն իմն է»,- ասել է Գրիգորյանը:

ՍՈՒՎԵՐԵՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը մեկնաբանել է Հայաստանի խորհրդարանի կողմից Եվրամիությանն անդամակցելու գործընթաց սկսելու մասին նախագծին հավանություն տալու փաստը: Ինչպես հայտնում է ՏԱՍՍ գործակալությունը, Պեսկովն ասել է, որ դա Հայաստանի սուվերեն իրավունքն է: «Դա Հայաստանի սուվերեն իրավունքն է: Իհարկե, հարկավոր է, որպեսզի իրենք հայերը եւ մնացած բոլորը հասկանան, թե դա որքանով է փոխադարձ ցանկություն, ինչպես են դրան վերաբերվում եվրոպացիները: Ինչպես երեւում է, Հայաստանում կան քաղաքական գործիչներ, որոնք կարծում են, որ դեպի ԵՄ կողմնորոշումը հավելյալ դիվիդենտներ կտա երկրի եւ ժողովրդի շահերի առումով՝ հստակություն չունենալով, թե արդյոք Եվրամիությունը հետաքրքրված է դրանով»,- ասել է Պեսկովը:

Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղարը նաեւ նշել է, որ Հայաստանը շարունակում է դիվիդենտներ ստանալ ԵԱՏՄ-ին անդամակցությունից, եւ այդ դիվիդենտներն ակնհայտ են: Հիշեցնենք, որ Հայաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունել է Եվրամիությանն անդամակցելու գործընթաց սկսելու մասին օրինագիծը: Օրինագծին կողմ է քվեարկել 63 պատգամավոր, դեմ՝ 7-ը: Կողմ են քվեարկել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները, ընդդիմադիր «Պատիվ ունեմ» խմբակցությունը դեմ է քվեարկել, իսկ «Հայաստան» խմբակցությունը չի մասնակցել քվեարկությանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՐՑՈՒՓՈՐՁ Է ԱՐԵԼ

Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ նախագահ Դանիել Իոաննիսյանը նախորդ շաբաթ՝ փետրվարի 8-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Երեւանի Արաբկիր վարչական շրջանի սրճարաններից մեկում հանդիպել է Քննչական կոմիտեի (ՔԿ) նախկին նախագահ Արգիշտի Քյարամյանի հետ: Համաձայն տարածված տեղեկությունների՝ նա քննարկել է Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի թեկնածուներից մեկի հարցը, որպեսզի Իոաննիսյանը քննության ժամանակ շատ ճնշում չգործադրի այդ թեկնածուի նկատմամբ: ArmLur.am-ը Դանիել Իոաննիսյանից հետաքրքրվեց, թե ինչու է հանդիպել Արգիշտի Քյարամյանի հետ եւ ինչ է քննարկել նրա հետ Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի ընտրությունից առաջ:

«Ես Արգիշտի Քյարամյանին ճանաչում եմ շատ վաղուց: Ինձ ամենաշատը հետաքրքրում էր քննչական կոմիտեում առկա բալային համակարգի հարցը, եւ ես հարցուփորձ եմ արել նրան: Ես ցանկանում եմ առաջ տանել, որ այդ համակարգը ներդրվի նաեւ ոստիկանական համակարգում: Բայց քանի որ այդ օրը հայտնի էր նաեւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի դիմորդների ով լինելը, ես հարցրեցի՝ ինչ գիտի թեկնածուների մասին: Ես ամեն օր տարբեր մարդկանց եմ հանդիպում՝ հայտնի եւ անհայտ, եւ հետաքրքրվում եմ, թե ինչ գիտեն թեկնածուների մասին: Այսքանը»,- նշեց Իոաննիսյանը:

ԳԱՂՏՆԻ ՉԷ

Իրականում Քիվեսթի փաստաթուղթը ինքը հույժ գաղտնի փաստաթուղթ չէ. եղել է Ալիեւի կողմից առաջարկ՝ փոխանակման ծրագիր: Այս մասին ասել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանը՝ անդրադառնալով ԵՄ-ին անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին նախագծին: «Քիվեսթի փաստաթուղթ է ձեւավորվել Մինսկի խմբի համանախագահող երկրների կողմից, առաջարկ է եղել, որը բանակցությունների ընթացքում դարձել է քիվեսթյան փաստաթուղթ, որի արդյունքով պետք է Լեռնային Ղարաբաղը Լաչինով դառնար Հայաստանի մաս եւ Նախիջեւանը կապ էր ստանում Ադրբեջանի հետ եւ որեւէ տեղ Մեղրի տեղանուն նշված չէ: Հիմա Լեռնային Ղարաբաղը Լաչինի միջանցքով ամբողջությամբ օկուպացված է Ադրբեջանի կողմից, դուք խոսում եք նորից Նախիջեւան-Ադրբեջան կապի տրամադրման մասին, երեկ էլ հայտարարվեց, որ անխոչընդոտ, անկանգառ կապ եք դուք պատրաստվում տալ: Դուք հասկանում եք բանակցությունների էության տարբերությունը, որտեղ ենք եղել եւ հիմա որտեղ ենք հասել: Ի վերջո, այդքան, որ խոսում եք հանձնելուց, հանձնելուց, պարզ մի բան եմ ասում, դուք Մեղրիում եղե՞լ եք: Մեղրին իր տեղում է, չէ՞, չի կորել Մեղրին: Տիկին Ղազարյան, խնդրում եմ, եկեք ես Ձեզ տանեմ Քոչարյանի հանձնած Մեղրին, Դուք ինձ տարեք Լեռնային Ղարաբաղ, Ձեր պահած Լեռնային Ղարաբաղը»,- հայտարարել է նա:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԱՐԴՈՒԿԻ ԳԾՈՎ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԳԱՂՏՆԻ ԵՆ

1 ⇨ Հրապարակման մեջ ԱԺ նախագահի թիմակիցներին խոցել էր հատկապես «արդուկի գծով խորհրդական Աշխեն Հայրապետյան» ձեւակերպումը, որի առնչությամբ ստիպված եղանք առանձին հարցում ուղարկել:



0095 ք. Երեւան, Մ. Բաղրամյան 19, հեռ. 011 513 488

11.02.2025 թ.

«ArmLur»-ի խմբագիր պատասխանատու
Սոնա Գրիգորյանին

Հարգելի՛ Սոնա Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր՝ 05.02.2025 թ. տեղեկատվություն ստանալու հարցման՝ հայտնում ենք հետեւյալը.

Առաջին հարցի առնչությամբ նշենք, որ Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի խորհրդական Աշխեն Հայրապետյանը կատարում է ԱԺ նախագահի հանձնարարությունները, ինչպես նաև իր գբաղեցրած հաստիքին համապատասխան աշխատանքային գործառույթները:

Երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ հայտնում ենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իմաստով դրանք հարցում չեն հանդիսանում: Հավելենք նաև, որ Ձեր պատկերացումները խորհրդարանի վերաբերյալ բացարձակ կապ չունեն երկրային իրականության հետ:

Հարգանքով՝

ԱԺ նախագահի մամուլի խոսնակ Մովսես Հարությունյան

Մեր հարցման պատասխանը

• Աշխեն Հայրապետյանը, որը գրեթե բոլոր գործուղումների ժամանակ ուղեկցում է Ալեն Սիմոնյանին, կոնկրետ ի՞նչ գործառույթ է իրականացնում:

• Խնդրում ենք ներկայացնել, թե որպես խորհրդական, Աշխեն Հայրապետյանը մինչ օրս քանի՞ խորհուրդ է տվել Ալեն Սիմոնյանին, որո՞նք են եղել դրանք, եւ ինչպե՞ս է այդ խորհուրդները կիրառել ԱԺ նախագահը (ներկայացնել ամբողջական ցանկով):

• ՔՊ-ական պատգամավորները «Ժողովուրդ» օրաթերթին պատմել են, որ Աշխեն Հայրապետյանը Ալեն Սիմոնյանի հագուստի արդուկի եւ կոստյումի ուսերի փոշիների հարցերով է զբաղվում: Վերջերս էլ նոր սարքավորում է ձեռք բերել՝ ուսերի փոշիները մաքրելու համար»:

Այս պարզ հարցադրումներին, որոնք ենթադրում էին հստակ պատասխաններ եւ պարզաբանումներ, ՀՀ ԱԺ նախագահի մամուլի խոսնակ Մովսես Հարությունյանը պատասխանել է. «Աշխեն Հայրապետյանը կատարում է ԱԺ նախագահի հանձնարարությունները եւ իր հաստիքին համապատասխան գործառույթները»:

Մնացած հարցերը բարեխղճության էտալոն Ալեն Սիմոնյանը իր խոսնակի միջոցով համարել է «Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով չնախատեսված հարցում»: Թեեւ լավ կլիներ՝ իրավաբան ԱԺ նախագահը իմանար, որ իր նախկին օգնականին (ամենայն հավանականությամբ բարձր աշխատավարձ ստանալու համար) խորհրդական դարձնելուց բացի՝ պարտավոր է պատասխանել, թե ինչ գործառույթներ է իրականացնում անգամ հայեցողական այդ պաշտոնյան բացի կենցաղային հարցերից:

Իհարկե, դժվար է պատկերացնել, թե Աշխեն Հայրապետյանը ինչ խորհուրդներ է տալիս Ալեն Սիմոնյանին, բայց այս անպատասխան հարցաշարը շատ հարցերի պատասխան էր արդեն:

Ա. ՍՐԿՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍՏՈՒԳԱՅՑԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

Երեկ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայությունը ստուգայցեր է իրականացրել մայրաքաղաքի հասարակական տրանսպորտում: Ստուգայցեր են իրականացվել «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 56-րդ եւ 80-րդ հոդվածների հիման վրա՝ ապահովելու Երեւանի ավագանու հաստատած կանոնների պահպանումը, ինչպես նաեւ քաղաքային բյուջե վճարվող պարտադիր այլ վճարների մուտքագրումը:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանը հանդիպել է Հնդկաստանի պաշտպանության հարցերով պետնախարար Սանջայ Սեթի հետ: Քննարկվել են պաշտպանության ոլորտում համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

ՔՊ ՎԵՐՆԱԽԱՎԻՑ

ՀՀ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը հայտնել է. «ՔՊ վերնախավի համար Հայաստանի ներսում եւ Սփյուռքում մարդկանց պառակտումը եւ իրար նկատմամբ ատելությունը, քաոսը դարձել են իշխանության մնալու երաշխիք: Մեր մեջ այս արատավոր երեւույթների գլխավոր սերմանողը, տարածողն ու հովանավորը ՔՊ վերնախավն է եւ ՔՊ-ի քարոզչական մեքենան: Արցախցիների հետ կապված ԱԺ նախագահի երեկվա խոսքերը դա եւս մեկ անգամ ապացուցեցին: ՔՊ-ն դրանից է սնվում, ու դա է նրան ուժ տալիս ճիշտ նույն կերպ, ինչ ադրբեջանական իշխանության համար՝ թշնամանքը հայերի նկատմամբ»:

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանը պահանջում է ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանից հրապարակային ներողություն խնդրել Արցախի տեղահանված ժողովրդից եւ զերծ մնալ արցախցիների պայքարն ու հայրենիքի պաշտպանությունը սակարկման ենթարկող որեւէ գնահատականից՝ միաժամանակ մեկնաբանել սեփական հայտարարությունը, թե ով եւ ում էր զանգում Արցախից ու խնդրում բացել այսպես կոչված սահմանը: Հիշեցնենք, որ Ալեն Սիմոնյանը, ի պատասխան արցախցի լրագրողի հարցի, ասել էր. «Որովհետեւ երբ որ դուք դուրս եկաք այդտեղից, անվտանգ չէր: Չնայած՝ կարելի էր մնալ ու մինչեւ վերջ պայքարել այն զենքերով, որոնք Հայաստանը թողել եւ տվել էր, քաղաքական սատարումով, բայց դուք դուրս եկաք: Պետք էր կռվել»: Լրագրողի դիտարկմանը, որ մարդիկ մորթվում էին, Սիմոնյանը կրկնեց. «Պետք էր կռվել: Պետք էր կռվել: Հայաստանը կռվել է, պետք էր կռվել»:

ՀԵՌԱՆԿԱՐ ՉՈՒՆԻ

«Մենք մեկնարկում ենք մի գործընթաց, որը տեսանելի ապագայում որեւէ հեռանկար չունի, եւ բոլորս դա հասկանում ենք». այս մասին, ԱԺ-ում ԵՄ-ին Հայաստանի անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին օրինագծի քննարկման ժամանակ հայտարարել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը:

«Այսինքն՝ մենք մեզ փորձում ենք տանել այն ժամանակները, որ արդեն ԵՄ-ում ենք, տեսեք՝ ԵՄ-ն ինչ լավ տեղ է: Դրանով փորձում ենք ինքներս մեզ համոզել, որ այս գործընթացը մեզ օգտակար է լինելու, բերելու է շատ լավ արդյունքներ: Երբ ասում ենք՝ Հայաստանը տարբեր միջազգային կառույցների մեջ է, դրանք իրար հետ համատեղելի չեն, ասում են՝ հիմա չի այդ հարցը, հիմա հո չե՞նք ասում, որ ԵՄ անդամ ենք: Այ, երբ ԵՄ անդամ կլինենք, այդ ժամանակ կորոշենք՝ որտեղ ենք գնում: Այսինքն՝ մենք նպատակով, որը բոլորի համար վարդագույն երազներ է առաջացնում, արդարացնում ենք գործընթացը, որը խիստ խոցելի է: Առնվազն երեք առումով դա մեզ համար առաջացնելու է լրջագույն խնդիրներ»,-ասել է նա:

ԲԱՆԱԿԻՑ ԳՈՂԱՆՈՒՄ ԵՆ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԱՐՈՐԴ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արամ Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ, զբաղեցնելով ՀՀ ՊՆ զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատարի պաշտոնը, ի թիվս այլնի, կրելով գումարտակի սպառազինության, ռազմական տեխնիկայի եւ գումարտակի նյութական մյուս միջոցների վիճակի եւ անվթարության համար պատասխանատվություն, 2024 թվականի օգոստոս ամսից մինչեւ 2024 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում, մեկ միասնական դիտավորությամբ, նույն գումարտակի նյութատեխնիկական ապահովման դասակի ավտոմոբիլային ջոկի վարորդ, պայմանագրային զինծառայող, սերժանտ Նվեր Դավիթի Պողոսյանի եւ նույն գումարտակի 7-րդ հրաձգային վաշտի աջակցման ջոկի հրամանատար, ավագ ենթասպա Գոռ Վալերիկի Ոսկանյանի օժանդակությամբ, յուրացման եղանակով հափշտակել է ի պաշտոնե իրեն փաստացի վստահված, ընդհանուր՝ 598.740 ՀՀ դրամի 1.200 լիտր դիզելային վառելիք:

Նվեր Դավիթի Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասի պայմանագրային զինծառայող, 2-րդ հրաձգային գումարտակի նյութապահովման դասակի վարորդ, նույն գումարտակի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատար Արամ Առաքելյանի դրդմամբ՝ հիշյալ զորամասի պայմանագրային զինծառայող, 2-րդ հրաձգային գումարտակի 7-րդ հրաձգային վաշտի աջակցման ջոկի հրամանատար Գոռ Ոսկանյանի հետ 2024 թվականի նոյեմբերի 20-ին՝ ժամը 20:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում, հափշտակել է Վայոց ձորի մարզի Արենի համայնքի խաչիկ բնակավայրի՝ ՀՀ ՊՆ զորամասի պահպանության տեղամասում գտնվող ամրացման շրջանի դիզելային ագրեգատի աշխատանքը կազմակերպելու համար նախատեսված եւ ՀՀ ՊՆ զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատար Արամ՝ Առաքելյանին վստահված ու նույն գումարտակի ավտոհավաքակայանում գտնվող տարածքից թվով 2 հատ 200 լիտրանոց տարաներով, ընդհանուր 400 լիտր տարողությամբ դիզելային վառելիքը ու այն 120.000 ՀՀ դրամ գումարով խաչիկ բնակավայրի բնակիչ, ՀՀ ՊՆ զորամասի աշխարհազորային վաշտի պայմանագրային զինծառայող, շարքային Հրայր Առաքելյանին վաճառելու նպատակով՝ Նվեր Պողոսյանին ամրակցված «Ուրալ 4320» մակնիշի ավտոմեքենայով, Գոռ Ոսկանյանի հետ նույն օրը տեղափոխել են Հրայր Ասատրյանի՝ Խաչիկ բնակավայրի կենտրոնական փողոցի 8 հասցեում գտնվող առանձնատուն:

Գոռ Վալերիկի Ոսկանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասի պայմանագրային զինծառայող, 2-րդ հրաձգային գումարտակի 7-րդ հրաձգային վաշտի աջակցման ջոկի հրամանատար, նույն զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատար Արամ Առաքելյանի դրդմամբ՝ հիշյալ զորամասի պայմանագրային զինծառայող, 2-րդ հրաձգային գումարտակի նյութապահովման դասակի վարորդ Նվեր Պողոսյանի հետ 2024 թվականի նոյեմբերի 20-ին՝ ժամը 20:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում, հափշտակել է Վայոց ձորի մարզի Արենի համայնքի խաչիկի շրջանի դիզելային ագրեգատի աշխատանքը կազմակերպելու համար նախատեսված եւ ՀՀ ՊՆ զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատար Արամ Առաքելյանին վստահված ու նույն գումարտակի ավտոհավաքակայանում գտնվող տարածքից թվով 2 հատ 200 լիտրանոց տարաներով, ընդհանուր՝ 400 լիտր տարողությամբ դիզելային վառելիքն ու այն 120.000 ՀՀ դրամ գումարով Խաչիկ բնակավայրի բնակիչ, ՀՀ ՊՆ զորամասի աշխարհազորային վաշտի պայմանագրային զինծառայող, շարքային Հրայր Առաքելյանին վաճառելու նպատակով՝ Նվեր Պողոսյանին ամրակցված «Ուրալ 4320» մակնիշի ավտոմեքենայով, վերջինիս հետ նույն օրը տեղափոխել են Հրայր Ասատրյանի՝ Խաչիկ բնակավայրի Կենտրոնական փողոցի 8 հասցեում գտնվող առանձնատուն:

Հրայր Ասատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասի աշխարհազորային վաշտի պայմանագրային զինծառայող, շահադիտական նպատակներից ելնելով, այն է՝ շուկայական արժեքից ցածր արժեքով դիզելային վառելիք գնելու նպատակով, 2024 թվականի նոյեմբերի 20-ին՝ ժամը 20:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում, նախապես չխոստացված պայմաններում, 120.000 ՀՀ դրամ գումարով ձեռք է բերել հանցավոր ճանապարհով ստացված, այն է՝ նույն զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատար Արամ Առաքելյանին վստահված ու նույն զորամասի զինծառայողներ Նվեր Պողոսյանի ու Գոռ Ոսկանյանի օժանդակությամբ Արամ Առաքելյանի կողմից հափշտակված Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի՝ ՀՀ ՊՆ զորամասի պահպանության տեղամասում գտնվող ամրացման շրջանի դիզելային ագրեգատի աշխատանքը կազմակերպելու համար նախատեսված թվով 2 հատ 200 լիտրանոց տարաներով, ընդհանուր 400 լիտր տարողությամբ դիզելային վառելիքը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԵՊՔԵՐ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում ստացված օպերատիվ տվյալների հիման վրա ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է Հայաստանի Հանրապետությունից դեպի Եվրոպա ապօրինի միգրացիայի կազմակերպման դեպք:

«Մասնավորապես, պարզվել է, որ Երեւան քաղաքում գործող տուրիստական գործակալություններից մեկի սեփականատեր եւ տնօրեն Ա.Դ.-ն եւ նույն ընկերության աշխատակից Ե.Խ.-ն, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում շահադիտական նպատակով՝ 3300 եվրո գումարի դիմաց, օտարերկրյա պետություն մուտքի եւ օտարերկրյա պետությունում գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ եւ կեղծ տեղեկություն ներկայացնելով, կազմակերպել են Տավուշի մարզի բնակչուհի Ս.Թ.-ի անօրինական միգրացիան:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված փաստական տվյալների հիման վրա առերեւույթ հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Քննչական կոմիտե պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն: Միեւնույն ժամանակ, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, Ա.Դ.-ն եւ Ե.Խ.-ն ձերբակալվել են եւ ներկայացվել նախաքննական մարմին:

Դեպքի առթիվ Հայաստանի Հանրապետության ՔԿ-ում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 470-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի եւ 457-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում անօրինական միգրացիայի կազմակերպիչներից Ե.Խ-ն կալանավորվել է, իսկ Ա.Դ-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը:

Բացի այդ, քրեական վարույթով կալանավորված անձանց բնակարաններում եւ աշխատավայրում իրականացված խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել են ծննդյան վկայականների, անձնագրերի, բանկային փոխանցումների վերաբերյալ քաղվածքների պատճեններ, համակարգիչներ, էլեկտրոնային կրիչներ, կնիքներ, տարբեր անձանցից գումարներ ստանալու վերաբերյալ գրառումներ պարունակող նոթատետր եւ այլն», - ասված է հաղորդագրությունում:

«ՔԻՄԻԿՆԵՐԻ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ

«ՊԵՏՔ Է ԵՐԿԻՐԸ ՄԱՔՐԵՆՔ», ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾԻ ՀԱՅՐ

Էջմիածնի «Քիմիկների» զորամասի անհետ կորած զինծառայողների գործով հակակոռուպցիոն դատարանում տեւական ժամանակ է՝ հարցաքննվում են անհետ կորած կամ զոհված զինծառայողների ծնողները, ինչպես նաեւ վկաները, իսկ այդ գործով մեղադրյալներ են ԳՇ պետի նախկին տեղակալ Անդրանիկ Մակարյանը, եւ զորամասի այլ պաշտոնյաներ:

Անդրանիկ Մակարյանին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 376 հոդվածի 3-րդ մասով:

Նշենք, որ ՀՀ ՔՕ 376 հոդվածի 3-րդ մասը սահմանում է անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ. սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, եթե դրանք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով: Անդրանիկ Մակարյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ երկրից չհեռանալու մասին:

ArmLur.am-ը գրուցել է «Քիմիկների» զորամասում անհետ կորած զինվոր Ալբերտ Մելքոնյանի հոր՝ Մելիք Մելքոնյանի հետ:

Ըստ նրա՝ պետք է հեղափոխություն անել, որպեսզի երկիրը մաքրեն իշխանություններից:

«Խաղաղություն չի լինի, թուրքեր հետ երբեք չի կարելի է խաղաղությունից խոսել: Պետք է երկիրը մաքրենք էս ժեխերից: Դատական նիստը շատ երկար է տեւում: Աբազյանը հանդիպել է Ադրբեջանի ազգային անվտանգության ծառայության-ի տնօրենի հետ, իրենք խոսակցություն են ունեցել, բայց մեզ ոչ մի բան չեն տեղեկացնում», - ասել է նա:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 136 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՐՁԻՑ ԳՏՆՎԵՑ

Տավուշի մարզպետարանը մրցույթ էր հայտարարել մարզում 1410 կովերի արհեստական սերմնավորման համար: Մրցույթն անցկացվել էր Կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշմամբ հաստատված՝ «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակներում: Ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր կովի սերմնավորման համար սերմնավորողին փոխհատուցել 10 հազար դրամ (5 հազար դրամը կվճարի անասնատերը): Մրցույթին կարող էին մասնակցել այն կազմակերպությունները, որոնք ունեն տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու առնվազն մեկ տարվա փորձ եւ համապատասխան գործունեությամբ զբաղվելու հավաստագիր ունեցող մասնագետներ, նաեւ ունեն վարկային դրական պատմություն: Հայտերի ընդունման վերջնաժամկետն էր 2024թ. դեկտեմբերի 12-ը: Սակայն մրցույթը չկայացավ, որովհետեւ մասնակիցներ չեղան: Մարզպետարանը նոր մրցույթ հայտարարեց: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել, թե որ կազմակերպությունն է հաղթել մրցույթում: Մարզպետարանից պատասխանել են. «Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կովերի արհեստական սերմնավորման վերաբերյալ մրցույթում հաղթող է ճանաչվել Ա/Ձ Դավիթ Նավասարդյանը: Պայմանագրի կնքման աշխատանքներն ընթացքի մեջ են»: Այս տարվա ավարտին պարզ կլինի, թե նշված կազմակերպությունը ինչպես է կատարել իր պայմանագրային պարտավորությունները, կովերի արհեստական սերմնավորման ծրագիրը որքանով է արդյունավետ եղել:

ՎԱՐՁԱՎՃԱՐԻՑ ԱՋԱՏՎԱԾ ՉԵՆ

Նոյեմբերյան համայնքի ավագանու որոշմամբ՝ համայնքի բոլոր բնակավայրերի՝ Նոյեմբերյան, Այրում քաղաքների եւ 17 գյուղերի մանուկները այս տարի մանկապարտեզներ կհաճախեն անվճար՝ համայնքի բյուջեի հաշվին: Դիլիջան համայնքի ավագանին 2025թ. հունվարի 10-ին որոշել է Դիլիջանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաների ուսման վարձավճարների նկատմամբ 2025 թվականի համար սահմանել արտոնություն՝

1) Միեւնույն ընտանիքից 2 եւ ավելի երեխաներ հաճախելու դեպքում՝ յուրաքանչյուր երկրորդ եւ հաջորդ երեխաների համար ուսման վարձավճարի 50 %-ի չափով,

2) Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ ուսման վարձավճարի 50 %-ի չափով,

3) Երկկողմանի ծնողազուրկ երեխաներին ազատել ուսման վարձավճարից,

4) Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներին ազատել ուսման վարձավճարից:

Դիլիջան համայնքի 2025թվականի բյուջեն եկամուտների եւ ծախսերի գծով կազմում է 1 միլիարդ 750 միլիոն դրամ,. Դիլիջանը ֆինանսական ավելի մեծ հնարավորություններ ունի մանկապարտեզների սաներին ազատելու վարձավճարներց՝ քան Նոյեմբերյանի համայնքապետարանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԻՆԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է

ArmLur.am-ը տեղեկացել է, որ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում արբալույսները խաղաղ չեն: Պարզվում է՝ Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Էդգար Հովհաննիսյանը կարողացել է այնպես անել, որ մի ընկերության կողմից իրականացվող մանկապարտեզի հիմնանորոգման պայմանագիրը միակողմանի չեղարկվի:

Իսկ ինչպես է սկսվել պատմությունը

Եվ այսպես, ArmLur.am-ին քաղաքացի Վահագն Ղալումյանը պատմել է, որ իր եւ կնոջ կողմից ղեկավարած «Տուրիստա» ընկերությունը, որպես շինարարական ընկերություն, «տենդեր» է շահել Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում՝ կառուցելու թիվ 2 մանկապարտեզը:

«2023 թվականի մարտի 14-ից սկսել եմ մանկապարտեզի կառուցման աշխատանքները: Ժամկետը 2 անգամ հետաձգվել է, բայց վերջնականը պետք է 2024 թվականի նոյեմբերի 1-ին՝ կառավարության որոշմամբ, ավարտվեր, իսկ դրանից հետո մեկ անգամ եւս բոլոր սուբվենցիոն ծրագրերը հետաձգել են մինչեւ 2025 թվականի նոյեմբերի 1-ը»,- ArmLur.am-ին պատմել է Վահագն Ղալումյանը:

Ղալումյանի խոսքով՝ Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Էդգար Հովհաննիսյանը լարված է եղել իր դեմ, քանի որ, ըստ իր տեղեկությունների, Հովհաննիսյանը վաղուց նպատակ է ունեցել, որ այդ մանկապարտեզի կառուցումն իրականացնեն իր ծանոթները:

«Բոլորն ինձ զգուշացնում էին, որ քո հետ լարված է, ասում էր՝ Վահագից գործը վերցնում ենք, ես անձամբ իրենց էլ ասել եմ, որ նման բան չկա, սուտ եք ասում, բայց պարզվեց՝ սուտ չէին ասում: Կոնկրետ չեմ կարող ասել, թե լարվածությունն ինչից սկսվեց, բայց արդեն պարզ էր, որ ընկած են իմ հետեւից: Ամեն օր 5 անգամ իրենց գործերը թողած՝ գալիս էին ու աշխատողներին ստուգում էին: Տեսուչ Սարգիսն ամեն օր գործի գնալիս գալիս էր, աշխատողներին հաշվում, նայում՝ ինչ գործ են անում, կոֆե են խմում, ես էլ կատակով իրենց ասել եմ՝ կարո՞ղ է աշխատանքի տեսչությունից եք, որ ամեն օր գալիս այդ մարդկանց ստուգում եք»,- պատմել է Ղալումյանը:

Վահագն Ղալումյանը «Ժողովուրդ»-ի հետ զրույցում ասել է, որ շինարարական նախագծում շեղումներ են եղել, որոնց մասին ինքը զգուշացրել է, սակայն ստացել են աշխատելու հորդոր:

«Երբ շինարարական պրոցեսները գնացին, նախագծում շեղումներ նկատեցին, որոնց մասին ես իրենց զգուշացրել էի նախօրոք, նամակներ էլ ենք ուղարկել, ասել են՝ աշխատեք: 10 տոկոսի շեղում էր, պատեր կային՝ քանդված էին, տված չէր՝ ինչով վերանորոգեինք, պատուհանները քիչ էին նախագծած: Թույլատրելի են դրանք, բայց մենք զգուշացրել ենք իրենց, որ սխալ են»,- նշել է Ղալումյանը:

Եզրափակելով խոսքը՝ Ղալումյանն ասել է, որ արդեն սեպտեմբերի 9-ին իրեն նամակով տեղեկացրել են, որ միակողմանի լուծարել են պայմանագիրը, որի գլխավոր մեղավորը Էդգար Հովհաննիսյանն է:

«Սեպտեմբերի 9-ին նամակով ուղարկել են լուծարման մասին թե՛ բանկին, թե՛ մեզ, որ ձեր պայմանագիրը 287 միլիոնից 200-ն արված է, իսկ մնացած 87 միլիոնը կասեցրել ենք եւ բանկից երաշխիքները բռնագանձել են»,- եզրափակեց Ղալումյանը:

«Ժողովուրդ»-ը կապ է հաստատել նաեւ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Էդգար Հովհաննիսյանի հետ: Հովհաննիսյանը մեզ հետ զրույցում հայտարարեց, թե որեւէ տրամադրվածություն չի ունեցել. շինարարական պրոցեսը կանգ է առել, ինչի համար համայնքապետարանը որոշել է դադարեցնել աշխատանքները:

«2022 թվականի սուբվենցիոն ծրագիր է: Շինաշխատանքները սկսվեցին, որոնք բավականին արագ ու լավ տեմպով ընթանում էին: Մենք՝ որպես համայնքի ներկայացուցիչ, անընդհատ ստուգում էինք, կար դրա հետ կապված հանձնաժողով, որը շաբաթվա մեջ մի քանի անգամ գնում եւ շինաշխատանքներին հետեւում էին: Մի ընթացք եկավ, երբ շինարարության տեմպը նվազեց: Տեմպի նվազելուց հետո սկսվեցին բողոքները: Շինարարության ընթացքում արված աշխատանքը կատարողականի միջոցով հանձնվում էր համայնքին, կատարողականը ստուգում էր, բոլորը գոհ էին՝ թե՛ շինարարները, թե՛ տեխհսկողը, թե՛ հանձնաժողովը. կատարողականի հիման վրա գումարը փոխանցվում էր տվյալ կազմակերպությանը: Դրանից հետո մենք ընդհանրապես գործ չունենք՝ ինքն այդ գումարով իր աշխատողներին կվճարի, թե ինչ-որ նյութ կգնի»,-հայտարարել է Հովհաննիսյանը:

Վերջինս ArmLur.am-ի հետ զրույցում նշել է, որ մանկապարտեզի աշխատանքները կտրուկ դադարեցվել են, եւ ոչ մի շինաշխատանք չի կատարվել, ու մանկապարտեզի շենքում ամիսներ շարունակ եղել է միայն հսկիչը:

«Հանձնաժողովը թե՛ վիդեոհոլովակով, թե՛ լուսանկարներով նկարահանել է, որ մանկապարտեզի դարպասները փակ են, շինաշխատանքները դադարեցված են, եւ այնտեղ միայն պահակն է եղել: Երբ գնացել ենք, միայն պահակն է եղել: Բազմաթիվ անգամներ գրություններ են ուղարկվել Վահագն Ղալումյանին համայնքի կողմից, թե երբ կսկսվեն մանկապարտեզի աշխատանքները, ասել է՝ ամսի մեկով, ամսի հինգով, երկուշաբթի: Ամիսներ շարունակ ձգձգել է այդ պրոցեսը, համայնքն էլ որոշում է կայացրել դադարեցնել աշխատանքը»,- նշել է Հովհաննիսյանը:

Ի դեպ, Վահագն Ղալումյանը դատի է տվել Մեծամոր համայնքին, քանի որ առանց իրենց տեղեկացնելու՝ միակողմանի լուծարել են պայմանագիրը: «Ժողովուրդ»-ի զրուցակիցը նշեց, որ իր ընտանիքը երեք բնակարան է գրավադրել, որ կարողանան մանկապարտեզի շինաշխատանքները իրականացնել, սակայն այսօր հայտնվել է նման իրավիճակում:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՅԵՐԻՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԵՆ

Աբխազիայի հայ համայնքը դիմել է Հայաստանի կառավարությանը՝ հայ բնակչության պաշտպանության համար լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու պահանջով:

Այնուամենայնիվ, աբխազահայերը կարծում են, որ տեղի քաղաքական ընդդիմությունը սերտ կապեր ունի թուրք ազգայնականների եւ թուրքական գաղտնի ծառայությունների հետ: Արդյունքում, աճող ճնշումների ներքո ընդդիմությունը տեղի հայերին դիտարկում է որպես Թուրքիայի աջակցությամբ իշխանությունը զավթելու խոչընդոտ եւ կազմում է «սեւ ցուցակներ»՝ նրանց դեմ սադրանքներ նախապատրաստելու համար:

Դիմումի հեղինակները մտահոգություն են հայտնում նաեւ հայ համայնքի դեմ հնարավոր ջարդերի եւ բռնությունների վերաբերյալ:

Ըստ լրատվամիջոցների՝ հայերի հետապնդման հիմնական նախաձեռնողներն են Աբխազիայի ինքնիշխանության պաշտպանության կոմիտեի նախագահ Լեւան Միկաան եւ Աբխազիայի ժողովրդական շարժման նախագահ, հանրապետության նախագահի թեկնածու Ադգուր Արձինբան:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՎՃԱՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԳՐՊԱՆԻՑ

Հայաստանում առողջապահական ծախսերի 79%-ը վճարվում է մեր գրպանից: Այս մասին հայտնել է տնտեսագետ Աղասի Թավադյանը: Նա, մասնավորապես, նշել է. «Գիտե՞ք, որ Հայաստանում առողջապահական ծախսերի 79%-ը վճարվում է մեր գրպանից...

Համեմատության համար՝
ԱՄՆ-ում՝ 20%
Եվրոպայի մեծ մասում՝ 10-20%
Հայաստանում՝ 79%:

Մենք նույն մակարդակի վրա ենք Թուրքմենստանի (79%), Աֆղանստանի (78%) եւ Նիգերիայի (76%) հետ: Այս քարտեզը ցույց է տալիս, թե ինչքան են մարդիկ իրենց գրպանից վճարում առողջապահության համար տարբեր երկրներում: Հետաքրքիրն այն է, որ ԱՄՆ-ում, որտեղ բուժումը շատ ավելի թանկ է, քան նույնիսկ Եվրոպայում, մարդիկ ավելի քիչ տոկոս են վճարում իրենց գրպանից: Պատճառը՝ ապահովագրական համակարգն է: Սա ցույց է տալիս, թե ինչքան կարեւոր է մեր երկրում առողջապահական համակարգի բարեփոխումները եւ ապահովագրական համակարգի ներդրումը»:

220 ՀԱԶԱՐ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՎԱՐԿԱՌՈՒ

Ըստ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Դավիթ Խաչատրյանի՝ Հայաստանում կա մոտ 220 հազար անհուսալի վարկ ունեցող մարդ՝ չբացառելով, որ այդ ցուցանիշը կարող է աճել: Նրա գնահատմամբ՝ այս թվի մոտ 60 տոկոսը կարող է դառնալ ծրագրի շահառու: Պաշտոնյան հիշեցրել է, որ աջակցության ծրագրից կարող են օգտվել նրանք, ովքեր վարկային պարտավորություններ ունեն Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերում եւ վարկային հաստատություններում, բոլոր վարկերի գծով մայր պարտքի ընդհանուր գումարը հայտի օրվա դրությամբ կազմում է 1 մլն դրամից պակաս, եւ այդ վարկերը առնվազն 3 տարի համարվել են անհուսալի: Նա պարզաբանել է, որ եթե մարդն ունի 271 եւ ավելի օրերի չսպասարկվող վարկ, ապա այս վարկը համարվում է անհուսալի, իսկ եթե այս ժամկետից անցել է առնվազն 3 տարի, ապա պետությունը կարծում է, որ պետք է օգնի նման քաղաքացիներին:

Հիշեցնենք, որ Հայաստանում փետրվարի 1-ից մեկնարկել է անհուսալի վարկեր ունեցող քաղաքացիներին աջակցելու ծրագիրը, եւ 1 000 մարդ արդեն դարձել է շահառու:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես Ռուբինա Կարենի Սուքիասյանս, կորցրել եմ AB 196431 համարի բակալավրի դիպլոմս՝ տրված 2014 թվականին Երեւանի պետական համալսարանի կողմից:

Գտնողին խնդրում եմ զանգահարել 094 627 067 հեռախոսահամարով:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵՄ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆԸ

Գիտուժ նախաձեռնությունն իր անհամաձայնությունն է հայտնել ԳՀՓՄ (գիտահետազոտական եւ փորձարարական մշակումներ) աշխատանքները որոշես այդպիսին որակող մասնագիտական հանձնաժողով ձեւավորելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի որոշ դրույթների վերաբերյալ:

Առկա են մի շարք հիմնարար խնդիրներ՝ ինչպես գործընթացի, այնպես էլ առաջարկվող կառուցվածքային լուծումների առումով: Գործընթացի հետ կապված մտահոգություններ կան:

ՀՀ կառավարության գործելաոճը թե՛ օրենսդրական փոփոխությունների, թե՛ առկա կարգավորման մշակման փուլերում խնդրահարույց է եղել: Չնայած ՀՀ վարչապետի մոտ կայացած հանդիպման ընթացքում ձեռք բերված համաձայնությանը՝ կառավարությունը չի ապահովել մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը գործընթացի սկզբնական փուլում եւ դրա փոխարեն քննարկման է ներկայացրել արդեն պատրաստի նախագծեր: Մենք գնահատում ենք ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ ընթացող քննարկումները եւ նրանց պատրաստակամությունը՝ լսելու մեր դիտարկումները, սակայն առկա ձեւաչափերը չեն ապահովում փաստարկված դիրքորոշման ներկայացման եւ որոշումների վրա իրական ազդեցություն ունենալու արդյունավետ հնարավորություն:

Նման գործընթացը խոչընդոտում է բովանդակային երկխոսությանը եւ սահմանափակում է բանիմաց շահառուների ներգրավման հնարավորությունները: Այս մասին են վկայում նաեւ գործարար համայնքի ներկայացուցիչների արտահայտած հանրային դիրքորոշումները:

Կառուցվածքային եւ ինստիտուցիոնալ մտահոգություններ

Պետական ԳՀՓՄ քաղաքականությունը չի կարող իրագործվել միայն մեկ նախարարության սահմանափակ մանդատի շրջանակում: Մենք մշտապես ընդգծել ենք, որ անհրաժեշտ է ԿԳՄՍ նախարարությունից դուրս զարգացնել պետական ինստիտուցիոնալ կարողությունները՝ խթանելու արդյունաբերական ԳՀՓՄ-ն եւ ապահովելու պետության հնարավորությունը՝ պատվիրակելու կիրառական հետազոտություններ ու փորձարարական մշակումներ՝ իր անվտանգության բազմաշերտ մարտահրավերները հաղթահարելու համար:

Սակայն ներկայիս առաջարկը ներառում է դրույթներ, որոնք հակասում են այս ռազմավարական նպատակին:

Մասնավորապես, մեր հետեւողական եւ փաստարկված առաջարկները՝ հիմնված միջազգային փորձի եւ ՀՀ օրենսդրության վրա, անտեսվել են: Նախատեսվում է, որ Հանձնաժողովի եզրակացությունները կհաստատի ԿԳՄՍ նախարարը, իսկ նախագահությունն ու քարտուղարությունը կվերապահվեն Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեին: Այս կառուցվածքը ԿԳՄՍ նախարարության լիազորությունների շրջանակում կենտրոնացնում է պետական ԳՀՓՄ քաղաքականության հետ առնչվող լրացուցիչ գործառույթներ, ինչը չի համապատասխանում արդյունաբերական ԳՀՓՄ-ի զարգացման պահանջներին:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԵՂԱԹՅՈՒՐՎՈՒՄ Է

Ցավալի է ՀՀ ԱԺ նախագահից՝ հույժ դատապարտելի կոչում ունեցող դատարանից այդպիսի անդատապարտելի հայտարարություններ լսելը Արցախի եւ արցախահայության մասին: Նման անհեռատես եւ հավակնոտ խոսքերը ոչ միայն չեն կարող նպաստել հայրենական կյանքում առկա խնդիրների լուծմանը, մեզ օդ ու ջրի պես այդքան անհրաժեշտ ազգային միասնության ապահովմանը, այլեւ ճիշտ հակառակը, դրանք առավելագույնս խորացնում են մեր ժողովրդի մեջ արհեստականորեն ներդրված հատվածականության բաժանարար գծերը:

Այս մասին հայտարարություն է տարածել ՀԱՍԵ Արցախի թեմը: «Ավելին, հոգեւոր տեսողություն եւ ընկալում ունեցող մարդկանց համար հստակ տեսանելի են այդպիսի վարքագծի բուն պատճառները: Դրախտում առաջին մարդկանց գործած ամենամեծ մեղքը եղավ ոչ թե արգելված պտուղն ուտելը, այլ Աստծո հարցմանն ի պատասխան՝ մեղքը իրենց վրայից ուրիշի վրա գցելը եւ չզղջալը: Այս երեւույթը ներկա է մարդկության պատմության ողջ ընթացքում եւ դրա հաղթահարումը հնարավոր է միայն քրիստոնեության ճանապարհով, որ սովորեցնում է առաջին հերթին տեսնել մեր մեղքը եւ պատասխանատու լինել մեր քայլերի համար: Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, Արցախի 9-ամսյա շրջափակման ընթացքին եւ 2023 թ. բռնի տեղահանումից հետո մեր ժողովրդի մի ստվար հատվածի մոտ ցավալիորեն արմատացել է մեղքն ու պատասխանատվությունը իրենցից հեռացնելու կործանարար մոտեցումը, ինչի համար հիմք են ծառայել ամենաբարձր մակարդակով բազմիցս արված նման անհեռատես ու պառակտիչ հայտարարությունները, իսկ ԱԺ նախագահի վերջին հայտարարությունը ընդամենը թարմացումն էր վերոնշյալ մոտեցման:

Հարկ չենք համարում մանրամասն կերպով վերստին անդրադառնալու, թե 9-ամսյա շրջափակման նեղությունները կրած մեր ժողովուրդը ինչպիսի հերոսական դիմադրություն ցույց տվեց 2023 թ. սեպտեմբերի 19-ին, որովհետեւ, համաձայն սուրբգրային խոսքի, «Ով աչք ունի տեսնելու՝ կտեսնի», իսկ ով ցանկություն չունի իրականությունը տեսնելու, երբեք էլ չի տեսնի: Բայց ամենամեծ ցավն այն է, որ իրականությունը լավագույնս իմացող, 2023 թ. Արցախին օգնելուց պաշտոնապես հրաժարված անձինք չեն վարանում վերստին խեղաթյուրելու իրականությունը՝ նորից ու նորից աղ լցնելով հայրենազուրկ արցախցիների չսպիացած վերքերին, անտեսելով նաեւ 2023 թվականին նահատակված հարյուրավոր մեր տղաների սխրանքը:

Աղոթում ենք, որ Աստված իմաստություն տա մեր ժողովրդին, որպեսզի ոչինչ ու ոչ ոք պատճառ չդառնան արհեստական լարվածության ու իրար հանդեպ անհանդուրժողականության: Ինչքան որ զորանա սերը, ներողամտությունը եւ միասնությունը մեր հայրենիքում, այնքան ավելի շուտ կկատարվեն մեր բոլոր նվիրական իղձերն ու երազանքները, որը, վստահ ենք, որ ամեն մի հայի ցանկությունն է»,- ասված է հայտարարության մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ 90

ՄԱՐԴ ՈՒ ԱՆԱՍՈՒՆ ԻՐԱՐԻՑ ՔՈԿՎՈՒՄ ԵՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ...

«.... Գլխաբաց շքերթի ելած մեր անբարո իրականությունը պետք է գրողի քո այրական իր պատասխանը ստանա: Գրոտեսկայնորեն դաժան իրականությունը բեզանից տղամարդ մարդու պատասխան է պահանջում - որ ես, ահա, ձեզ ճանաչում եմ: Որ ես կամքով, այլասացությամբ յոլա չեմ գնա: Ճի՛շտ, կողի՛ս, ճշգրի՛տ, շիտակ պիտի լինես՝ այնքա՛ն, ինչքան իր ժամանակին Չարենցը եղավ»: Հրանտ Մաթեւոսյանն է ասել՝ մեծ մարդը, մտավորականը, գրողը:



Առհասարակ Մաթեւոսյանի ձեռագիրը կարելի է արվեստի մի ուրիշ ճյուղ համարել, քանի որ իր խորությամբ, բայց միեւնույն ժամանակ «բոլորի համար լինելով»՝ գրավում է ընթերցողին:

Փետրվարի 12-ը գրողի ծննդյան օրն է: ArmLur.am-ը ներկայացնում է գրողի հայտնի հարցազրույներից որոշ հատվածներ եւ նրա հետաքրքիր մտքերից:

Իր տված հարցազրույցներից մեկում Մաթեւոսյանն ասել է. «Քիչ եմ գրել եւ դրանում մեղքի իմ բաժինն այնքան էլ մեծ չէ: «Ահնիձորի» չափազանցված արձագանքը, «Մենք ենք, մեր սարերը» վիպակի եւ ապա կինոսցենարի վիճարկումը ինչքան ուժ խլեցին ինձանից, որ կարող էր դառնալ գրական վաստակ, գեղարվեստական արժեք: Կինոյում անցկացրած տարիները կորսված եմ համարում, կինոն ինձ միայն դառը հիասթափություն ու ծանր պարտություններ տվեց՝ բացառությամբ, թերեւս, «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի, որ Հենրիկ Մալյանի հաջողված էկրանավորումներից է: «Տերը» ժողովածուն տպագրելու մտադրություն չունեի, գրվել էին՝ որպես գրական սցենարներ, բայց հրապարակեցի հանդիսական-ընթերցողիս թողությունը հայցելու հույսով: Հիասթափություններն ու պարտությունները պիտի որ դաս լինեին, բայց ազգային մեծ կինո ունենալու հավատս չեմ կորցրել: Կուզենայի, թեկուզեւ ոչ իմ՝ մեզանից մեկնումեկի աշխատանքով ստեղծվեր, մեր մշակույթի նվաճում դառնար եւ իր ողջ շողը ու փայլով լայնածավալ երկրի էկրանով անցներ մեր ազգային կերպարը»:

Կարելի է ասել, որ Մաթեւոսյանն անտեսանելի թելերով կապված է եղել բնությանը, իր հայրենի բնաշխարհին եւ դրա բացասական փոփոխությանն արձագանքել է սրտի ցավով, ինչը նույնպես փաստում են հարցազրույցները:

Հրանտ Մաթեւոսյանն ասել է, որ հողի կորուստը, արդյունաբերական ագրեսիան, բնության ու մարդու բախումը, ապագա սերունդների ուներզրկումը ծանր խնդիրներ են, որ պիտի քննվեն ըստ ամենայնի, սահմանադրական հոդվածի հստակություն առնեն, համընդհանուր մտահոգության ու լրջության միջավայրում ճշտվեն ու գործադրվեն դրանց լուծման միջոցները:

«Այդ մասին պետք է խոսել կամ ամբողջ երկրով մեկ ու ամբողջ ձայնով, կամ բոլորովին չպետք է խոսել: Թերասացությունը լռությունից վատ է, թերասացությունը հարցը մաշում ու թմրեցնում է»,- իր տված հարցազրույցներից մեկում ասել է Մաթեւոսյանը: Հրանտ Մաթեւոսյանի խոսքերը արդիական են մինչ օրս: Թվում է, թե գրողը ճշգրիտ կերպով բարձրաձայնել է նաեւ այսօրվա խնդիրների մասին:

Հրանտ Մաթեւոսյանի պարզ ու շիտակ խոսքերը այսօր էլ կարող են օգնել շատերին եւ մտածելու տեղիք տալ: Եթե դուք անորոշության մեջ եք եւ չգիտեք՝ինչ անել, ապա դրա մասին էլ է գրել Մաթեւոսյանը. «Ճշմարտությունը քոնն է, հաղթանակը՝ քոնը, ապագան՝ քոնը: Ճշմարիտը դու ես հաղթողը՝դու, ապագայի տերը՝դու...»:

• Ժամանակը նույնքան առարկայական է, ինչքան առարկայական է ողջ աշխարհը: Երբ դարասկզբի կերպարը դնում ես այսօրվա կերպարի կողքին՝ պարզվում է, որ ժամանակը առարկայական է շոշափելիորեն, ինչպես այս ծառը, այս արտը, այս հայրենիքը, որոնցից կարելի է հեռանալ, որոնց կարելի է մոտենալ:

• Պետք է մտածեինք պահանջատիրոջ մասին եւ ոչ պահանջատիրության: Պետք է սիրեինք այս Հայրենիքը, հոգայինք այսօրվա հոգսը: Այլապես, հնարավոր է, վաղը պահանջատիրությունը բավարարվի՝ մեջտեղը պահանջատեր չլինի, մանավանդ որ այսպես մի անգամ արդեն եղել է. ձեզ Երզնկայից Շուշի երկիր ենք տալիս, բայց ժողովուրդ չունեք:

• Մարդ չպետք է այնքան քաղցր լինի, որ կուլ տան... ոչ էլ այնքան դառը, որ թքեն:

• Մարդ ու անասուն իրարից հիշողությունով են ջոկվում, ես հիշողություն ունեմ:

• Լավերը շուտ են մեռնում: Վատերը տնքտնքում են ու չեն մեռնում....

• Չասելով ասելը, երեւի, ավելի մեծ իմացություն ու կուլտուրա է պահանջում:

Կարդալով Հրանտ Մաթեւոսյանի տողերը, թվում է, թե կարդում ես այսօրվա մասին, ապրում ու զգում ամեն տողը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՆՅՈՒԴԱՐՁ

ՀԱՅ ԱԹԼԵՏՆԵՐԸ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի աթլետիկայի հավաքականի համար 2025 թվականի մրցաշրջանը կմեկնարկի Բալկանյան երկրների ձմեռային առաջնությամբ: Այս մասին ասել է Հայաստանի աթլետիկայի հավաքականի գլխավոր մարզիչ Գրիգոր Բարսեղյանը: «2025 թվականի առաջին մրցաշարը, որին մասնակցում ենք, Բալկանյան երկրների ձմեռային առաջնությունն է: Մարտին կայանալու է Եվրոպայի առաջնությունը, որին կմասնակցենք 2 մարզիկով: Իսկ ահա մայիսին Արտաշատում կկայանա Հայաստանի առաջնությունը», - ասել է նա:

Հայաստանի աթլետիկայի հավաքականը Բալկանյանը երկրների ձմեռային առաջնությանը կմասնակցի 6 մարզիկով՝ Երվանդ Մկրտչյան (վազք), Ռազմիկ Ղազարյան (եռացատկ), Գոռ Հովակիմյան (եռացատկ), Յանա Սարգսյանը (հեռացատկ, եռացատկ), Իզաբելլա Առաքելյան (հեռացատկ): Մարզիչները կլինեն հավաքականի գլխավոր մարզիչ Գրիգոր Բարսեղյանն ու մարզիչ Արսեն Պետրոսյանը:

Առաջնությունը կկայանա Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում եւ կմեկնարկի փետրվարի 15-ին:

ՆՈՐ ԵՐԳ ԵՎ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ

Փետրվարի 11-ին՝Սիրո տոներին ընդառաջ, երգչուհի Իվետա Մուկուչյանը ներկայացրել է իր նոր՝ «Սիրում եմ» աշխատանքը, որն առաջինը դիտելու հնարավորություն ունեցան տեսահոլովակի առիթով կազմակերպած փակ դիտման հյուրերը:

«Ես ու Սերժոն դեռ տարիներ առաջ ցանկանում էինք Ապո Սարգսյանի «Սիրտս խփում է» երգը նոր շնչով ներկայացնել: Առհասարակ, ռետրո ծրագիր ներկայացնելու միտք ունենք: Ոչ միայն այս երգը, այլ նաեւ մտադրություն ունեինք ռետրո ծրագիր իրականացնել «Դաշտերով» նախագծից հետո: Սերժոն «Դաշտերով» ալբոմի հեղինակն է ու գործիքավորել է «Դաշտերով», «Նինո», «Ղափամա» եւ այլ ստեղծագործություններ, որոնք իմ եւ Արամ Mp3-ի կատարմամբ առաջատար էին ու իսկապես շատ էին սիրվել հանրության կողմից: Մինչ այդ էլ Սերժոյի հետ նոր ոճով «Արի յար» ու «Հարս» տեսահոլովակներն էինք նկարահանել: Վստահ եմ՝կրկին փոխելու ենք Հայաստանի երաժշտական ռիթմը»,- լրագրողների հետ զրույցում ասաց Իվետա Մուկուչյանը: Իվետան խոստովանել է, որ ռիսկային քայլի էր գնացել, քանի որ վստահել էր հանրության համար ոչ հայտնի ռեժիսորի՝ Ալբերտ Սարգսյանին, սակայն վերջինս լիովին իրականացրել է իր առջեւ դրված բոլոր խնդիրները՝ ստանալով ֆիլմ հիշեցնող համարձակ ու վառ տեսահոլովակ: Ի դեպ, Ալբերտը նաեւ բեմադրող օպերատորն է:

Հավելենք, որ երաժշտական պրոդյուսերը Սերժոն է: Ռեժիսորն ու օպերատորը՝ Ալբերտ Սարգսյանը: Նախագծի դիզայները Ալբերտ Գրիգորյանն է, մոնտաժն ու գունամշակումն իրականացրել է Տիգրան Վանյանը: Խորեոգրաֆիայի հեղինակները Աիդա Սիմոնն ու Հասմիկ Թանգյանն են: Պրոդյուսերը Ալեքսանդր Միերյանն է:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ԵՐԿԱՐԱՁԳԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Կատալոնական «Բարսելոնան» երկարաձգել է պայմանագիրը թիմի փորձառու լեհ հարձակվող Ռոբերտ Լեւանդովսկու հետ, հայտնում է իսպանական հայտնի Mundo Deportivo առցանց հրատարակությունը: Հարձակվողի գործող պայմանագիրն ակումբի հետ նախատեսված էր մինչեւ 2025 թվականի ամառը: Աղբյուրի տեղեկություններով՝ Լեւանդովսկին «Բարսելոնայում» կմնա մինչեւ 2026 թվականը: Ռոբերտը «Բլաուգրանայում» հանդես է գալիս 2022 թվականից: Transfermarkt հեղինակավոր ինտերնետային պորտալը 36-ամյա հարձակվողի շուկայական արժեքը գնահատում է 15 մլն եվրո: Այս մրցաշրջանում Լեւանդովսկին բոլոր մրցաշարերում անցկացրել է 33 հանդիպում՝ դառնալով 31 գոլի եւ 3 գոլային փոխանցման հեղինակ:

ՍՊԵՐՑՅԱՆԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է 20 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

«Կրասնոդարի» հայ կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը խոսել է, թե ինչ նշանակություն ունի ռուսական ակումբի ավագը լինելը: «Ակումբում իմ ամբողջ կարիերան եկավ աչքիս առաջ: Զգացմունքները խեղդում էին, թեեւ ես հասկանում էի, որ Սաֆոնովի հեռանալուց հետո ես կլինեմ ավագը, քանի որ նրա օրոք ես փոխավագն էի»:

Այս մրցաշրջանում Սպերցյանը «Կրասնոդարի» կազմում անցկացրել է 25 հանդիպում բոլոր մրցաշարերում՝ դառնալով 6 գոլի եւ երեք գոլային փոխանցման հեղինակ: Ֆուտբոլիստի ներկայիս աշխատանքային պայմանագիրն իր ներկայիս ակումբի հետ ուժի մեջ է մինչեւ 2026 թվականի ամառը: Transfermarkt ինտերնետային պորտալում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 24-ամյա ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 20 միլիոն եվրո:

ՄԲԱՊԵՆ ԳՈԼ Է ԽՓԵԼ

Մադրիդի «Ռեալը» դարձել է երրորդ ակումբը, որի կազմում հարձակվող Կիլիան Մբապեն գոլ է խփել անգլիական «Մանչեսթեր Սիթիին»: Ֆրանսիացի ֆուտբոլիստը Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակչում հանդես գալու իրավունքի համար թիմերի միջեւ կայացած առաջին փլեյ-օֆֆի խաղում դարպասը գրավել է 60-րդ րոպեին: Մինչ այս, սակայն, Մբապեն «Մանչեսթեր Սիթիի» դեմ խաղերում խփած գնդակներով աչքի էր ընկել նաեւ ՊՍԺ-ի եւ «Մոնակոյի» կազմում: Ֆրանսիացի հարձակվողը «Մոնակոյի» հիմնական թիմում հանդես է եկել 2016-ից 2017 թվականներին, իսկ ՊՍԺ-ում՝ 2017-ից 2024 թվականներին: Ֆուտբոլիստի գործող աշխատանքային պայմանագիրը մադրիդյան ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2029 թվականի ամառը:

● Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում մարտի 5-ին տեղի կունենա «Ցանկապատ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000, 4000, 5000, 6000, 7000, 8000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք՝ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները ի՞նչ են ենթադրում: Ի՞նչ գործոններով են պայմանավորված այդ հանգամանքները:

Ալլա Մանուկյան (34 տարեկան, օպերատոր)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար, ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը:

Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժեքավորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (երբ օրինակ ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող է փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

ԷՋԸ՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք, թե ի՞նչ կարգով է իրականացվում որդեգրումը, ո՞վ կարող է լինել որդեգրող, ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ որդեգրման պետական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում որդեգրման պետական գրանցումը, որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Լիաննա Հայրապետյան (41 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ որդեգրում (դստերագրում) (այսուհետ՝ որդեգրումը) թույլատրվում է միայն մինչեւ 18 տարեկան անձանց նկատմամբ եւ ելնելով նրանց շահերից՝ հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգեւոր եւ բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները: Որդեգրումը հաստատվում է դատարանի կողմից եւ դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո որդեգրումը ենթակա է պարտադիր պետական գրանցման ՔԿԱԳ տարածքային մարմնում: Որդեգրման պետական գրանցումն իրականացնելու համար անհրաժեշտ է որդեգրողների (որդեգրողի) կամ նրանց կողմից լիազորված անձի գրավոր դիմումը (դիմումի ձեւանմուշը կարող եք ձեռք բերել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կայքից՝ www.moj.am հասցեով կամ ՔԿԱԳ մարմնից), որդեգրման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը, որդեգրողների (որդեգրողի) անձը հաստատող փաստաթղթերը, որդեգրողների ամուսնության վկայականը, որդեգրվողի ծննդյան վկայականը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Որդեգրողներ կարող են լինել չափահաս անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնական էջից

Երեկ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը լուսանկար էր հրապարակել սոցցանցիր իր էջում: Նրա աշխատասենյակի պատին՝ հենց իր գլխավերեւում, փակցված է Նիկոլ Փաշինյանի նկարը: Ինչպես ասում են՝ վարչապետը նախարարի «գլխի վերեւը տեղ ունի»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-7 - 12 -3 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 10 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-6 - 11 -3 + 1
Լոռի	-7 - 10 -1 + 4
Տավուշ	-3 - 6 0 + 2
Արագածոտնի լեռներ	-9 - 14 -2 + 4
Արագածոտնի նախալեռներ	-1 - 3 -1 + 5

Արարատ	0 - 5 +1 + 4
Արմավիր	-3 + 1 +4 + 6
Վայոց ձորի լեռներ	-4 - 7 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-2 + 2 +4 + 6
Սյունիքի հովիտներ	-6 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	0 + 3 +7 + 10
ԼՂՀ	0 + 2 +7 + 9
Երեւան	-1 - 3 +8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*